

Չակտիվացված ինֆլուենզայի

Պատվաստ 2011-12

ինչ Պետք է Դուք Իմանաք

Պատվաստի Տեղեկության Հայտարարություններ կան իսպաներենով և շատ այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis կայքը:
Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis

1 Ինչո՞ւ պետք է պատվաստվեք:

ինֆլուենզան (գրիպ - "flu") վարակիչ հիվանդություն է:

Դրա պատճառը ինֆլուենզայի մանրէն է, որը կարող է տարածվել հազի, փոշտալու կամ քթից արտահոսքի պատճառով:

Որեւէ մեկը կարող է ինֆլուենզայով վարակվել, բայց վարակի աստիճանը շատ բարձր է երեխաների մոտ: Մարդկանց մեծամասնության մոտ ախտանշանները տեսում են ընդամենը մի քանի օր: Դրանք ընդգրկում են.

- տաքություն/դող
- կոկորդի ցավ
- մկանային ցավեր
- հոգևածություն
- հազ
- գլխացավ
- հոսող կամ լցված քիթ

Ուրիշ հիվանդություններ նույնպես կարող են նույն ախտանշանները ունենալ եւ հաճախ շփոթվել ինֆլուենզայի հետ:

Փոքր երեխաները, 65 տարեկան եւ ավելի մեծ մարդիկ, հղի կանայք եւ որոշակի առողջական հարցեր ունեցող մարդիկ - ինչպես, օրինակ, սրտի, թոքերի կամ երիկամների հիվանդություն կամ տկար իմունային համակարգ - կարող են ավելի շատ հիվանդանալ: Ինֆլուենզան կարող է բարձր ջերմություն եւ թոքերի բորբոքում առաջացնել եւ առկա առողջական խնդիրները ավելի վատացնել: Երեխաների մոտ դա կարող է առաջացնել փոքրահարություն եւ ուշաթափություն: Ամեն տարի հազարավոր մարդիկ են մահանում ինֆլուենզայից եւ էլ ավելի շատերը հոսպիտալացվում են:

Գրիպի պատվաստ ստանալով դուք կարող եք ձեզ պաշտպանել ինֆլուենզայից, ինչպես նաեւ կարող եք խուսափել ուրիշներից փոխանցելուց:

2 Չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ

Կա ինֆլուենզայի պատվաստի երկու տեսակ:

1. **Չակտիվացված (սպանված) պատվաստը՝ «գրիպի սրսկումը»**, տրվում է ասեղով սրսկման միջոցով:
2. **Կենդանի, թուլացված (տկարացված) ինֆլուենզայի պատվաստ**, որը ցողվում է քթանցքի մեջ: *Այս պատվաստի մասին նկարագրվում է առանձին Պատվաստի Տեղեկության Հայտարարության մեջ:*

«Բարձր չափաբաժնով» չակտիվացված ինֆլուենզայի պատվաստը հասանելի է 65 եւ բարձր տարեկան մարդկանց համար: Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժշկին:

Ինֆլուենզայի մանրէները միշտ փոխվում են, այսպիսով տարեկան պատվաստումը հանձնարարվում է: Ամեն տարի գիտնականները փորձում են պատվաստի մեջ եղած մանրէները համեմատել տվյալ տարում գրիպ պատճառելու հավանականություն ունեցող մանրէների հետ: Գրիպի պատվաստը չի պաշտպանի այլ մանրէների կողմից հարուցված հիվանդություններից, Ներառյալ գրիպի այն մանրէները, որոնք պատվաստի մեջ ներառված չեն լինում:

Պաշտպանությունը կնեղործի ներարկումից հետո 2 շաբաթվա ընթացքում: Պաշտպանությունը տեսնվելիք է մեկ տարի:

Ինֆլուենզայի չակտիվացված որոշ պատվաստներ պարունակում են թիմերոզալ կոչվող պահպանիչներ: Թիմերոզալ չպարունակող ինֆլուենզայի պատվաստը հասանելի է: Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժշկին:

3 Ո՞վ պետք է ստանա չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ եւ ե՞րբ:

Ո՞Վ

6 ամսական եւ ավելի մեծ բոլոր մարդիկ պետք է ստանան գրիպի պատվաստ:

Պատվաստը հատկապես կարեւոր է ծանր ինֆլուենզայի հավանական ռիսկի տակ գտնվող եւ նրանց հետ մոտիկից շփում ունեցող մարդկանց համար, Ներառյալ առողջապահական անձնակազմը եւ 6 ամսականից փոքր երեխաները:

Ե՞ՐԲ

Պատվաստը ստացեք ամփոփապես երբ այն հասանելի է: Դա կտա ապահովություն այն պարագայում, երբ գրիպի սեզոնը շուտ գա: Դուք կարող եք պատվաստ ստանալ այնքան ժամանակ, քանի դեռ հիվանդությունը առկա է ձեր համայնքում:

Ինֆլուենզան կարող է լինել որեւէ ժամանակ, սակայն ամենաշատը լինում է հոկտեմբերից մայիս ժամանակահատվածում: Նախկին սեզոններում, շատ վարակներ սկսվել են հունվարին եւ փետրվարին: Դեկտեմբերին, կամ նույնիսկ ավելի ուշ պատվաստում ստանալը կարող է օգտակար լինել բոլոր տարիների համար:

Չափահասները եւ մեծ երեխաները յուրաքանչյուր տարի կարիք ունեն ինֆլուենզայի պատվաստի մեկ չափաբաժնի: Բայց 9 տարեկանից փոքր որոշ երեխաներ պաշտպանվելու համար կարիք ունեն երկու չափաբաժնի: Հարցրեք ձեր բժշկին:

Ինֆլուենզայի պատվաստը կարող է տրվել այլ պատվաստների հետ միաժամանակ, ներառյալ թոքաբորբի պատվաստը:

4 Որոշ մարդիկ պետք է ստանան չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ կամ պետք է սպասեն

- Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք ունեք որեւէ ծանր (կյանքի համար վտանգավոր) ալերգիա, ներառյալ ձկնի սկալոմամբ ծանր ալերգիա: Պատվաստի որեւէ բաղադրիչի նկատմամբ ծանր ալերգիան կարող է պատվաստը չստանալու պատճառ դառնալ: Ինֆլուենզայի պատվաստից առաջացած ալերգիկ ռեակցիաները հազվադեպ են:
- Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք երբեւէ ինֆլուենզայի մի չափաբաժնից ծանր ռեակցիա եք ունեցել:
- Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք երբեւէ Guillain-Barré ունեցել եք (ծանր անդամալուծող հիվանդություն, որ նույնպես կոչվում է GBS): Ձեր բժիշկը կօգնի ձեզ որոշելու, արդե՞րոք պատվաստվելը ձեզ անհրաժեշտ է:

- Մարդիկ, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև առողջանալը, նախքան պատվաստ ստանալը: Եթե դուք հիվանդ եք, խոսեք ձեր բժշկի կամ հիվանդագրասի հետ ձեր պատվաստումի թվականը փոխելու համար: Թեթև հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են պատվաստ ստանալ:

5 Ի՞նչ են չակտիվացված ինֆլուենզայի պատվաստի հետեւանքները:

Պատվաստը, որնէ դեղի նման, հավանականությունը ունի առաջացնելու լուրջ խնդիրներ, ինչպես ծանր ալերգիկ ռեակցիաներ: Պատվաստի՝ ծանր վնաս կամ մահ առաջացնելու վտանգը չափազանց փոքր է:

անալու հավանականությունը շատ հազվադեպ է: Չակտիվացված ինֆլուենզայի մեջ մանրէները սպանված են, այսպիսով դուք չեք կարող պատվաստից վարակվել:

Թեթև պրոբլեմներ.

- ցավ, կարմրություն կամ ուռածություն ասեղի տեղում
 - խոպոտություն, ցավ կամ կարմրած աչքեր, հազ, քոր
 - տաքություն • ցավեր • գլխացավ • քոր • հոգնածություն
- Եթե այս պրոբլեմները լինեն, սովորաբար դրանք կսկսվեն սրկումից քիչ անց և կտեւեն 1-2 օր:

Չափավոր պրոբլեմներ.

Փոքր երեխաները, որոնք չակտիվացված ինֆլուենզայի պատվաստը են թոքաբորբի կոկի պատվաստը (PCV13) միաժամանակ են ստանում, հայտնվում են տաքության պատճառով առաջացած ցնցումներ ունենալու բարձր ռիսկի վիճակում: Ավելի շատ տեղեկություն ստանալու համար հարցրեք ձեր բժշկին:

Ասեք ձեր բժշկին, եթե գրիպի պատվաստ ստացող երեխան երբեւ ցնցումներ է ունեցել:

Ծանր պրոբլեմներ.

- Պատվաստի հետեւանքով կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե դրանք պատահեն, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:
- 1976-ին չակտիվացված ինֆլուենզայի մի տեսակ (խոզի գրիպ) առնչեցին Guillain-Barré Սինդրոմի հետ (GBS): Մինչ այդ, գրիպի պատվաստները որոշակիորեն GBS-ի հետ չէին առնչվել: Այնուամենայնիվ, եթե գրիպի ընթացիկ պատվաստներից GBS-ի վտանգ կա, ապա պատվաստված մեկ միլիոն մարդկանցից ոչ ավելի քան 1 կամ 2 դեպք կլինի: Սա ավելի ցածր է, քան պատվաստումի միջոցով կանխարգելվող ծանր ինֆլուենզայի վտանգը:

Չակտիվացված գրիպի տեսակներից Աֆլուրիա (Afluria) կոչվող պատվաստը **պետք չէ տրվի 8 տարեկան և ավելի փոքր երեխաներին**, բացառաբար հատուկ պարագաների: Նման մի պատվաստ գուգորդվել է Ավստրալիայում երեխաների մոտ ջերմությամբ և ջերմության հետ կապված ուշաթափության հետ: Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժշկին:

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

Պատվաստի անվտանգությունը միշտ հսկողության տակ է: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք www.cdc.gov/vaccinesafety/Vaccine_Monitoring/Index.html և www.cdc.gov/vaccinesafety/Activities/Activities_Index.html կայքերը:

6 Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:

Որնէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խոպոտությունը կամ խոխոռոցը, ցաները, գունատությունը, թուլությունը, սրտի արագ բաբախումը կամ գլխապտույտը:

Ես ի՞նչ պետք է անեմ:

- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- **Ասեք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը և ժամանակը և պատվաստումը երբ է կատարվել:
- **Խնդրեք** ձեր բժշկին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակադեղեցության Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգահարել **1-800-822-7967** համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

7 Պատվաստի վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագիր


Պատվաստի վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագիրը (National Vaccine Injury Compensation Program, VICP) ստեղծվել է 1986-ին:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ իրենք վնասվել են պատվաստից, կարող են ծրագրի մասին ավելի տեղեկանալ և բողոք ներկայացնել զանգահարելով **1-800-338-2382** համարին կամ այցելել VICP www.hrsa.gov/vaccinecompensation կայքը:


8 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման և Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC). **1-888-767-4687**
- Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
- Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/flu

DCH-0457A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION



Vaccine Information Statement (Interim)

Inactivated Influenza Vaccine IMM569ARM – Armenian (7/26/11) 42 U.S.C §300aa-26
Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net